Միացյալ ազգերի կազմակերպության «Մարդկային ներուժի զարգացման 2014 թ. ինդեքս»

2015 թ. դեկտեմբերի 14-ին Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (UNDP) հրապարակել է «Մարդկային ներուժի զարգացման 2015թ. զեկույց» ամենամյա ամփոփումը[1]: Այդ զեկույցում ներկայացվել է «Մարդկային ներուժի զարգացման» 2014 թվականի ինդեքսը, որի հիմքում ՄԱԿ-ի անդամ 193 երկրներից 188 երկրի 2012-2014 թթ. տվյալներն են:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» չափում է երկրի՝ մարդկային ներուժի զարգացման միջին առաջընթացը և միավորում է երեք ցուցանիշներ՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ն, մարդու առողջությունն ու կյանքի սպասվող միջին տևողությունը, ինչպես նաև բնակչության կրթական մակարդակը: Այլ կերպ ասած, «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» ներկայացնում է մարդկային զարգացման հետևյալ երեք հարթությունների բաղադրյալ գնահատականը. ապրել երկար և առողջ կյանքով (չափվում է կյանքի տևողությամբ), լինել կրթված (չափվում է գրագիտությամբ) և ունենալ արժանավայել կենսամակարդակ (չափվում է գնողունակության համարժեքությամբ, եկամտի մակարդակով):

Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը երեք առանձին ենթաինդեքսների ամփոփ գնահատականն է: Դրանք են՝ ***կյանքի տևողության ենթաինդեքսը***, ***կրթության ենթաինդեքսը*** և ***համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) ենթաինդեքսը***:

Կյանքի տևողության ենթաինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝ (Vi-Vmin)/(Vmax-Vmin), որտեղ Vi-ն տվյալ երկրում կյանքի միջին տևողությունն է՝ արտահայտված տարիներով: 2014 թ. ինդեքսի գնահատման ժամանակ Vmax-ը կազմել է 85.0 տարի, իսկ Vmin-ը կազմել է 20 տարի: Երկրում կյանքի միջին տևողության ցուցանիշի աղբյուր է ծառայել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի տվյալները:

Կրթության ինդեքսի գնահատման ժամանակ նախկինում կիրառվող չափահասների գրագիտության ցուցանիշը փոխարինվել է չափահասների ուսման միջին տարիների ցուցանիշով, որը 25 տարեկանից բարձր չափահասների սովորած տարիների միջինն է (ներառում է դպրոցում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու տարիները): Բացի այդ, կրթության ինդեքսում նախկինում կիրառվող մյուս՝ համախառն (դպրոցական, բակալավրիատ, մագիստրատուրայի և ավելի բարձր մակարդակի) գրագիտության ցուցանիշը փոխարինվել է ուսման սպասվող տարիների ցուցանիշով, որն արտացոլում է այն տարիների թիվը, որն անցնելով դպրոցական տարիքի հասած երեխան կունենա ԲՈՒՀ ընդունվելու համար անհրաժեշտ գրագիտության մակարդակ: Երկրում չափահասների ուսման տարիների ցուցանիշի աղբյուր են ծառայել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի տվյալները:

Այսպիսով, 2014թ. կրթության ենթաինդեքսը գնահատելիս հաշվարկել են երկու առանձին ցուցանիշներ՝ չափահասների ուսման միջին տարիները և դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները: Առաջինը, չափահասների ուսման միջին տարիների

---

[1] Տե՛ս **2015 Human Development Report**, Work for Human Development, UN, 2015. http://hdr.undp.org/sites/default/files/2015_human_development_report.pdf:

գնահատականը հաշվարկվել է (Vi-Vmin)/(Vmax-Vmin) բանաձևով, որտեղ Vi-ը տվյալ երկրի դպրոցներում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու տարիների միջինն է: Vmax-ը սահմանված է 15.0 տարի, իսկ Vmin-ը սահմանված է 0 տարի: Երկրորդը՝ դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիների գնահատականը հաշվարկվել է նույն բանաձևով: Vmax-ը սահմանված է 18.0 տարի, որը համարժեք է մագիստրոսի կոչում ձեռք բերելու համար անհրաժեշտ ուսման տարիներին, իսկ Vmin-ը սահմանված է 0 տարի: Վերոնշյալ երկու ցուցանիշների միջինացված գնահատականի հիման վրա հաշվարկվում է կրթության ենթաինդեքսը:

Կենսամակարդակի գնահատման ժամանակ 2014թ. ինդեքսում օգտագործվել է երկրների ՀԱԵ-ն, քանի որ, ըստ ՄԱԿ-ի փորձագետների սահմանման, ՀԱԵ-ն ներառում է ոչ միայն ներքին արտադրությունը, այլև ներկայումս երկրների ռեզիդենտների համար եկամտի զգալի աղբյուր հանդիսացող միջազգային ոչ առևտրային բնույթի փոխանցումները, մարդասիրական օգնությունները և այլն: Հետևաբար, ներկայումս եկամտի ենթաինդեքսը հաշվարկվում է՝ օգտագործելով բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ճշգրտված ՀԱԵ-ի (ըստ 2011թ. գնողունակության համարժեքության, միջազգային դոլար) ցուցանիշը: Եկամուտները ճշգրտվում են, որովհետև մարդկային զարգացման պատշաճ մակարդակի հասնելու համար չի պահանջվում ունենալ անսահմանափակ եկամուտ: Հետևաբար, օգտագործվում է եկամտի լոգարիթմը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ (Vi-Vmin)/(Vmax-Vmin), որտեղ Vi-ը տվյալ երկրում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ճշգրտված ՀԱԵ-ի փաստացի ցուցանիշն է: Vmax-ը և Vmin-ը սահմանված են համապատասխանաբար 75,000 ԱՄՆ դոլար և 100 ԱՄՆ դոլար: Կոնկրետ երկրում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ի ցուցանիշի աղբյուր են ծառայել Համաշխարհային բանկի տվյալները:

Վերջում, «Կյանքի տևողության», «Կրթության» և «ՀԱԵ»-ի ենթաինդեքսների միջին երկրաչափականի հիման վրա (նախորդ տարիներին օգտագործում էին նշված ենթաինդեքսների միջին թվաբանականը) գնահատվում է երկրի ամփոփ «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը»[2]:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 2014»-ում երկրները, ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի, դասակարգվել են «շատ բարձր» (0.800 և բարձր), «բարձր» (0.700-ից մինչև 0.799), «միջին» (0.550-ից մինչև 0.699) և «ցածր» (0.550-ից ցածր) մակարդակ ունեցող երկրների[3]:

Հայաստանի գնահատականները. Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» 2014 թվականի համար գնահատվել է 0.733 միավոր, որը նախորդ տարվա ցուցանիշի հետ աճել է 0.002 միավորով: Ինդեքսի գնահատականի բարելավումը պայմանավորված է կյանքի միջին տևողության ենթաինդեքսի (0.002 միավորով) և ՀԱԵ ենթաինդեքսի (0.003 միավորով) բարելավմամբ:

Ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի՝ Հայաստանը ներկայումս դասվում է մարդկային ներուժի զարգացման **«բարձր մակարդակ»** ունեցող երկրների թվին և զբաղեցնում է 85-րդ տեղը աշխարհի 188 երկրների թվում (տե՛ս աղյուսակ 1): Ընդ որում, Հայաստանը 85-րդ տեղը կիսում է Ալբանիայի և Բոսնիա-Հերցեգովինայի հետ: Ինչ վերաբերում է այս ինդեքսի հիմքում ընկած

[2] Առավել հանգամանորեն տե՛ս http://hdr.undp.org/sites/default/files/hdr2015_technical_notes.pdf:
[3] Տե՛ս http://hdr.undp.org/sites/default/files/2015_human_development_report.pdf, էջ 56:

առանձին ենթաինդեքսներին, ապա, նկատենք, որ կյանքի տևողության 2014 թ. ենթաինդեքսը Հայաստանում կազմել է 0.842, կրթության ենթաինդեքսը՝ 0.702 և ՀԱԵ ենթաինդեքսը՝ 0.664:

Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսի հիմքում ընկած ցուցանիշների դինամիկան ցույց է տալիս, որ 1990-2014 թթ. ընթացքում Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» աճել է 16.0%-ով կամ յուրաքանչյուր տարի միջին հաշվով աճել է 0.62%-ով՝ 0.632-ից հասնելով 0.733-ի: 1980-2014թթ. ընթացքում կյանքի միջին տևողությունն ավելացել է շուրջ 3.8 տարով, ուսման միջին տևողությունն ավելացել է 1.7 տարով: 1990-2014թթ. ընթացքում մեկ շնչի հաշվով եկամուտն ավելացել է 126.9%-ով (տե՛ս աղյուսակներ 2, 3):

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. Հայաստանը մարդկային ներուժի զարգացման մակարդակով 2014թ.-ին հարավկովկասյան տարածաշրջանում զիջում է իր հարևան երկու երկրներին: Այդ ցուցակում Վրաստանը 76-րդ տեղում է, իսկ Ադրբեջանը՝ 78-րդն է: Հայաստանի և հարևան երկրների հիմնական ցուցանիշները վկայում են, որ Հայաստանը մարդու կյանքի սպասվող միջին տևողությամբ և ուսման սպասվող տարիներով գերազանցում է Ադրբեջանին, իսկ մեկ շնչի հաշվով եկամտով գերազանցում է Վրաստանին (տե՛ս աղյուսակ 1):

Նկատենք, որ Հայաստանի հարևան մյուս երկու երկրներից Իրանը զբաղեցնում է 69-րդ տեղը. այդ երկրում կյանքի միջին տևողությունը՝ 75.4 տարի է, մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը 15,440 ԱՄՆ դոլար, կրթության միջին տևողությունը 8.2 տարի, կրթության սպասվող տևողությունը՝ 15.1 տարի: Թուրքիան զբաղեցնում է 72–րդ տեղը. այդ երկրում կյանքի միջին տևողությունը՝ 75.3 տարի է, մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը 18,677 ԱՄՆ դոլար, կրթության միջին տևողությունը 7.6 տարի է, կրթության սպասվող տևողությունը՝ 14.5 տարի:

2014 թ. արդյունքներով՝ աշխարհի 188 երկրների շարքում ամենաբարձր «մարդկային ներուժի զարգացման ինդեքս» ունեցող, այսինքն՝ ամենաբարեկեցիկ երկրների թվում են Նորվեգիան, Ավստրալիան, Շվեյցարիան, Դանիան, Նիդերլանդները, Գերմանիան, Իռլանդիան, ԱՄՆ-ը, Կանադան և Նոր Զելանդիան: Ոչ բարեկեցիկ երկրների շարքում են Մալին, Մոզամբիկը, Սիեռա Լեոնեն, Գվինեան, Բուրկինա Ֆասոն, Բուրունդին, Չադը, Էրիթրեան, Կենտրոնական Աֆրիկյան հանրապետությունը և Նիգերը:

Կյանքի միջին տևողությունը ամենացածրն է Սիեռա Լեոնեում՝ 45.6 տարի է, իսկ ամենաբարձրն է Հոնկոնգում՝ 84 տարի: Մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ի ամենաբարձր արդյունքն ունի Կատարը՝ 123,124 դոլար: Ամենաաղքատ բնակչությունն ունի Կենտրոնական աֆրիկյան հանրապետությունը. այստեղ մեկ շնչին բաժին ընկնող տարեկան եկամուտը չի գերազանցում 581 դոլարը:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ինդեքսները և դրանց բաղադրիչների գնահատականները ներկայացված են աղյուսակ 1-2-ում, իսկ Հայաստանի «**Մարդկային ներուժի զարգացման**» ինդեքսների 1990-2014թ. դինամիկան ներկայացված է աղյուսակ 3-ում:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» և նրա բաղադրիչները՝ ըստ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գնահատականների

Աղյուսակ 1

Երկրի դիրքը աշխարհի 188 երկրների շարքում	Երկրի անվանումը	Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի արժեքը	Կյանքի միջին տևողությունը (տարի)	Ուսման միջին տարիները (տարի)	Ուսման սպասվող տարիները (տարի)	ՀԱԵ-ն մեկ շնչի հաշվով (2011 PPP US$)	Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի արժեքը	Դիրքի փոփոխությունը,
2014		2014	2014	2014	2014	2014	2013	2013-2014
Մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակ								
25	Սլովենիա	0.880	80.4	11.9	16.8	27,852	0.874	0
28	Չեխիա	0.870	78.6	12.3	16.4	26,660	0.861	0
30	Էստոնիա	0.861	76.8	12.5	16.5	25,214	0.840	3
35	Սլովակիա	0.844	76.3	12.2	15.1	25,845	0.830	2
36	Լեհաստան	0.843	77.4	11.8	15.5	23,177	0.834	-1
37	Լիտվա	0.839	73.3	12.4	16.4	24,500	0.834	-2
44	Հունգարիա	0.828	75.2	11.6	15.4	22,916	0.818	-1
46	Լատվիա	0.819	74.2	11.5	15.2	22,281	0.810	2
47	Խորվաթիա	0.818	77.3	11.0	14.8	19,409	0.812	0
49	Մոնտենեգրո	0.802	76.2	11.2	15.2	14,558	0.789	2
Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ								
50	Բելառուս	0.798	71.3	12.0	15.7	16,676	0.786	3
50	Ռուսաստան	0.798	70.1	12.0	14.7	22,352	0.778	7
52	Ռումինիա	0.793	74.7	10.8	14.2	18,108	0.785	2
56	Ղազախստան	0.788	69.4	11.4	15.0	20,867	0.757	14
59	Բուլղարիա	0.782	74.2	10.6	14.4	15,596	0.777	-1
66	Սերբիա	0.771	74.9	10.5	14.4	12,190	0.745	11
76	Վրաստան	0.754	74.9	12.1	13.8	7,164	0.744	3
78	Ադրբեջան	0.751	70.8	11.2	11.9	16,428	0.747	-2
81	Մակեդոնիա	0.747	75.4	9.3	13.4	11,780	0.732	3
81	Ուկրաինա	0.747	71.0	11.3	15.1	8,178	0.734	2
85	Ալբանիա	0.733	77.8	9.3	11.8	9,943	0.716	10
85	Հայաստան	0.733	74.7	10.9	12.3	8,124	0.730	2
85	Բոսնիա-Հերց.	0.733	76.5	8.3	13.6	9,638	0.731	-1
Մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ								
107	Մոլդովա	0.693	71.6	11.2	11.9	5,223	0.663	7
109	Թուրքմենստան	0.688	65.6	9.9	10.8	13,066	0.698	-6
114	Ուզբեկստան	0.675	68.4	10.9	11.5	5,567	0.661	2
120	Ղրղզստան	0.655	70.6	10.6	12.5	3,044	0.628	5
129	Տաջիկստան	0.624	69.4	10.4	11.2	2,517	0.607	4
	Համաշխարհային	**0.711**	**71.5**	**7.9**	**12.2**	**14,301**	**0.702**	**—**

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ ըստ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գնահատականների

Աղյուսակ 2

Երկրի դիրքը 188 երկրների շարքում	Երկիրը	Մարդկային ներուժի զարգացման ինդեքսավորում							Երկրի դիրքը 187 երկրների շարքում	Երկրի տեղի փոփոխությունը	Միջին տարեկան աճի տեմպը, %	Միջին տարեկան աճի տեմպը, %
2014		1990	2000	2010	2011	2012	2013	2014	2013	2009-2014	(1990–2000)	(1990–2014)
Մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակ												
25	Սլովենիա	0.766	0.824	0.876	0.877	0.878	0.878	0.880	25	-1	0.73	0.58
28	Չեխիա	0.761	0.821	0.863	0.866	0.867	0.868	0.870	28	0	0.76	0.56
30	Էստոնիա	0.726	0.780	0.838	0.849	0.855	0.859	0.861	30	3	0.73	0.71
35	Սլովակիա	0.738	0.763	0.827	0.832	0.836	0.839	0.844	36	3	0.34	0.56
36	Լեհաստան	0.713	0.786	0.829	0.833	0.838	0.840	0.843	35	1	0.99	0.70
37	Լիտվա	0.730	0.754	0.827	0.831	0.833	0.837	0.839	37	-1	0.32	0.58
44	Հունգարիա	0.703	0.769	0.821	0.823	0.823	0.825	0.828	44	-4	0.90	0.69
46	Լատվիա	0.692	0.727	0.811	0.812	0.813	0.816	0.819	47	-5	0.49	0.70
47	Խորվաթիա	0.670	0.749	0.807	0.814	0.817	0.817	0.818	46	-1	1.12	0.83
49	Մոնտենեգրո	..	..	0.792	0.798	0.798	0.801	0.802	49	1	..	..
Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ												
50	Բելառուս	..	0.683	0.786	0.793	0.796	0.796	0.798	51	4	..	..
50	Ռուսաստան	0.729	0.717	0.783	0.790	0.795	0.797	0.798	50	8	-0.17	0.38
52	Ռումինիա	0.703	0.706	0.784	0.786	0.788	0.791	0.793	53	-1	0.04	0.50
56	Ղազախստան	0.690	0.679	0.766	0.772	0.778	0.785	0.788	56	6	-0.15	0.56
59	Բուլղարիա	0.695	0.713	0.773	0.775	0.778	0.779	0.782	59	0	0.26	0.49
66	Սերբիա	0.714	0.710	0.757	0.761	0.762	0.771	0.771	64	-1	-0.05	0.32
76	Վրաստան	..	0.672	0.735	0.740	0.747	0.750	0.754	76	4	..	..
78	Ադրբեջան	..	0.640	0.741	0.742	0.745	0.749	0.751	77	-2	..	..
81	Մակեդոնիա	..	..	0.738	0.742	0.743	0.744	0.747	81	-2	..	..
81	Ուկրաինա	0.705	0.668	0.732	0.738	0.743	0.746	0.747	80	2	-0.54	0.24
85	Ալբանիա	0.624	0.656	0.722	0.728	0.729	0.732	0.733	85	2	0.50	0.67
85	Հայաստան	0.632	0.648	0.721	0.723	0.728	0.731	0.733	87	1	0.24	0.62
85	Բոսնիա-Հերց.	..	..	0.710	0.724	0.726	0.729	0.733	89	2	..	..
Մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ												
107	Մոլդովա	0.652	0.597	0.672	0.679	0.683	0.690	0.693	107	2	-0.87	0.26
109	Թուրքմենստան	..	..	0.666	0.671	0.677	0.682	0.688	109	..	..	..
114	Ուզբեկստան	..	0.594	0.655	0.661	0.668	0.672	0.675	114	0	..	..
120	Ղրղզստան	0.615	0.593	0.634	0.639	0.645	0.652	0.655	121	3	-0.37	0.26
129	Տաջիկստան	0.616	0.535	0.608	0.612	0.617	0.621	0.624	129	1	-1.39	0.06
	Համաշխարհային	0.597	0.641	0.697	0.703	0.707	0.709	0.711	—	—	0.71	0.73

Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսների դինամիկան գնահատված ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նոր մեթոդաբանությամբ[4]

Աղյուսակ 3.

	Կյանքի միջին տևողությունը, (տարի)	Ուսման միջին տարիները (տարի)	Ուսման սպասվող տարիները (տարի)	ՀԱԵ-ն մեկ շնչի հաշվով (2011 PPP, $)	Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի արժեքը
1980թ.	70.9	9.2	..	..	..
1985թ.	69.7	9.6	..	..	..
1990թ.	67.9	10.1	10.7	3,581	0.632
1995թ.	68.9	10.4	10.2	2,170	0.605
2000թ.	71.5	10.8	11.1	3,004	0.648
2005թ.	73.5	10.8	11.2	5,533	0.695
2006թ.	73.4	10.8	11.5	4,806	0.703
2007թ.	73.6	10.8	11.9	5,446	0.715
2008թ.	73.8	10.8	11.8	5,842	0.719
2009թ.	74.0	10.8	12.0	4,931	0.712
2010թ.	74.2	10.9	12.3	6,838	0.721
2011թ.	74.3	10.9	12.3	7,054	0.723
2012թ.	74.4	10.9	12.3	7,584	0.728
2013թ.	74.6	10.9	12.3	7,891	0.731
2014թ.	74.7	10.9	12.3	8,124	0.733

[4] Տե՛ս http://hdr.undp.org/sites/all/themes/hdr_theme/country-notes/ARM.pdf: